

No. 54565*

**Poland
and
Armenia**

Agreement between the Government of the Republic of Poland and the Government of the Republic of Armenia on co-operation in combating crime. Warsaw, 6 September 2004

Entry into force: *7 April 2005, in accordance with article 12*

Authentic texts: *Armenian, Polish and Russian*

Registration with the Secretariat of the United Nations: *Poland, 14 July 2017*

**No UNTS volume number has yet been determined for this record. The Text(s) reproduced below, if attached, are the authentic texts of the agreement /action attachment as submitted for registration and publication to the Secretariat. For ease of reference they were sequentially paginated. Translations, if attached, are not final and are provided for information only.*

**Pologne
et
Arménie**

Accord entre le Gouvernement de la République de Pologne et le Gouvernement de la République d'Arménie sur la coopération en matière de lutte contre la criminalité. Varsovie, 6 septembre 2004

Entrée en vigueur : *7 avril 2005, conformément à l'article 12*

Textes authentiques : *arménien, polonais et russe*

Enregistrement auprès du Secrétariat des Nations Unies : *Pologne, 14 juillet 2017*

**Aucun numéro de volume n'a encore été attribué à ce dossier. Les textes disponibles qui sont reproduits ci-dessous sont les textes originaux de l'accord ou de l'action tels que soumis pour enregistrement. Par souci de clarté, leurs pages ont été numérotées. Les traductions qui accompagnent ces textes ne sont pas définitives et sont fournies uniquement à titre d'information.*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**Լեհաստանի Հանրապետության Կառավարության և Հայաստանի
Հանրապետության Կառավարության միջև հանցավորության դեմ
սլաքարում համագործակցության մասին**

Լեհաստանի Հանրապետության Կառավարությունը և Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր, ձգտելով հետագայում զարգացնել համագործակցությունը քարեկամության և փոխըմբռնման ոգով.

մտահոգություն արտահայտելով հանցավորության զարգացման, հատկապես դրա կազմակերպված ձևերի, ծավալների և միտումների վերաբերյալ,

համոզված լինելով, որ անվտանգության և հասարակական կարգի պահպանության մարմինների համագործակցությունը էական նշանակություն ունի հանցավորության, հատկապես դրա կազմակերպված ձևերի դեմ արդյունավետ սլաքարի համար,

ձգտելով ապահովել մարդու կյանքի և առողջության, իրավունքների և ազատությունների, հասարակության և պետության շահերի նկատմամբ ոտնձգություններից հուսալի պաշտպանություն,

սլաքարում միջազգային իրավական նորմերը և իրենց պետությունների ներքին օրենսդրությունը, ինչպես նաև ղեկավարվելով հավասարության և փոխշահավետ համագործակցության սկզբունքներով,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Համագործակցության ոլորտները

1. Կողմերը, իրենց ներքին օրենսդրության և սույն Համաձայնագրի դրույթների համաձայն, կհամագործակցեն հանցագործությունների կանխման, խափանման և բացահայտման գործում՝ հատկապես.

1) ուղղված անձի կյանքի և առողջության դեմ,

2) կապված ահաբեկչական գործունեության հետ,

3) զենքի, ռազմամթերքի, սլաքարիկ նյութերի, ինչպես նաև միջուկային և ռադիոակտիվ նյութերի, զանգվածային ոչնչացման զենքի, երկակի նշանակության ապրանքների շրջանառությունը, վնաս պատճառելու նպատակով դրանց ոչ տեղին օգտագործումը կամ ոչ ճիշտ օգտագործման սլաքարակալի հետ կապված հանցագործություններ.

4) կավատությունը, անչափահասների մասնակցությամբ պողոտային շահագործումը, անչափահասների մասնակցությամբ պողոտային շահագործումը, անչափահասների մասնակցությամբ պողոտային շահագործումը, անչափահասների մասնակցությամբ պողոտային շահագործումը, անչափահասների մասնակցությամբ պողոտային շահագործումը.

5) մարդկանց առևտուրը և մարդու ազատությունից զրկելը.

6) մարդկանց օրգանների, հյուսվածքների և բջիջների սլաքարի առևտուրը.

7) սլաքարի միգրացիան,

8) տարբեր իրերի, մասնավորապես, մշակութային արժեքների և փոխադրամիջոցների գողությունը, մաքսանենգությունը և ապօրինի առևտուրը.

9) վճարման միջոցների և արժեթղթերի կեղծումը կամ նմանակումը, ինչպես նաև դրանք շրջանառության մեջ մտցնելը.

10) փաստաթղթերի կեղծումը կամ նմանակումը կամ նման փաստաթղթերի օգտագործումը որպես իսկական.

11) հանցավոր գործունեության արդյունքում ստացված եկամուտների օրինականացումը,

12) թմրամիջոցների, հոգեմեդրոնիկայի նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառությունը,

13) բարձր տեխնոլոգիաների ոլորտի հանցագործությունները,

14) շրջակա միջավայրի դեմ ուղղված հանցագործությունները:

2. Կողմերը կհամագործակցեն՝

1) քրեական հետապնդումից կամ պատիժը կրելուց թաքնվող, ինչպես նաև անհայտ կորած անձանց հետախուզման,

2) անհայտ անձանց, չճանաչված դիակների ինքնությունը պարզելու,

3) հանցագործությունների իրեղեն ապացույցներ հանդիսացող առարկաների որոնման բնագավառներում:

3. Սույն Համաձայնագիրը չի առնչվում համձնման հետ կապված հարցերին:

Հ ո ղ վ ա ծ 2 **Իրավասու մարմինները**

1. Սույն Համաձայնագրի կատարման համար համագործակցությունն իրականացվում է անմիջականորեն իրավասու մարմինների միջև՝ նրանց իրավասությունների շրջանակներում, որոնք սահմանված են ներքին օրենսդրությամբ:

2. Իրավասու մարմիններ են.

1) լեհական կողմից՝

- ներքին գործերով իրավասու նախարարը,
- հասարակական ֆինանսների հարցերով իրավասու նախարարը,
- ֆինանսական հաստատությունների հարցերով իրավասու նախարարը,
- ֆինանսական տեղեկատվության գլխավոր տեսուչը,
- ոստիկանության գլխավոր պարետը,
- սահմանային պահպանության գլխավոր պարետը,
- ներքին անվտանգության գործակալության տնօրենը.

2) հայկական կողմից՝

- Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը,
- ազգային անվտանգության ծառայությունը,
- Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր

մաքսային պետական կոմիտեն:

3. Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցում են իրավասու մարմինների իրավասության կամ անվանման փոփոխությունների մասին:

4. 2-րդ կետում նշված մարմինները կարող են փոխանակել կապի սպաների, ինչպես նաև, ներքին ընթացակարգերը պահպանելով, կնքել համաձայնագրեր, որոնք կապահովեն համագործակցության մանրամասն սկզբունքները և առարկան: Մարմինները անհրաժեշտության դեպքում կարող են նաև անցկացնել խորհրդակցություններ՝ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով, որը հանդիսանում է սույն Համաձայնագրի առարկան:

Հոդված 3

Համագործակցության ձևերը

1. Կողմերի միջև համագործակցությունը կիրականացվի մասնավորապես՝

1) 1-ին հոդվածում թվարկված հանցագործությունների կանխարգելման, կանխման և բացահայտման բնագավառում տեղեկատվության և փորձի փոխանակման միջոցով,

2) փորձագետների փոխանակման միջոցով, հատկապես քրեագիտական տեխնիկայի և հանցավորության դեմ պայքարի օպերատիվ մեթոդների բնագավառում,

3) հրապարակումների, գիտական հետազոտությունների արդյունքների, վիճակագրական տվյալների, ինչպես նաև Կողմերի իրավական ակտերի փոխանակման միջոցով, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրներով համատեղ գիտական հետազոտություններ անցկացնելու միջոցով,

4) հանցագործությունների նոր տեսակների, դրանց կանխման և հայտնաբերման մեթոդների և ձևերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով,

5) աշխատանքային փորձի, այդ թվում՝ ստաժավորումների, խորհրդակցությունների, սեմինարների և ուսումնական դասընթացների անցկացման միջոցով:

2. Կողմերի իրավասու մարմինները միմյանց կտրամադրեն տվյալներ հանցագործությունների կատարման մեջ կասկածվող անձանց վերաբերյալ, ինչպես նաև տվյալներ՝

1) հանցագործությունների կազմակերպիչների և նրանց հանցակիցների մասին,

2) հանցագործություններ կատարողների միջև հանցավոր կապերի մասին,

3) հանցավոր խմբերի և կազմակերպությունների կառուցվածքների, ինչպես նաև դրանց գործելու մեթոդների մասին,

4) առանձին կատարողների և նրանց խմբերի վարքագծին բնորոշ դրսևորումների մասին,

5) գործի էական հանգամանքների, մասնավորապես, հանցագործության կատարման ժամանակի, վայրի և միջոցի, հանցագործության առարկայի և բնորոշ հատկանիշների մասին,

6) քրեական օրենսդրության խախտված դրույթների մասին,

7) ձեռնարկված միջոցների և դրանց արդյունքների մասին:

3. Համագործակցություն իրականացնելու համար Կողմերի իրավասու

մարմինները կարող են ձեռնարկել համատեղ համաձայնեցված օպերատիվ գործողություններ:

Հոդված 4

Գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը

1. Կողմերի իրավասու մարմինները կապահովեն միմյանց փոխանցվող գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը: Այդպիսի տեղեկատվության գաղտնիության աստիճանը սահմանվում է տեղեկատվություն տրամադրող Կողմի պետության ներքին օրենսդրությամբ:

2. Վերոհիշյալ բնույթի ցանկացած տեղեկատվություն կամ տեխնիկական սարքավորում, որը տրամադրված է մի Կողմի իրավասու մարմնի կողմից մյուս Կողմի իրավասու մարմնին, կարող է տրամադրվել երրորդ երկրների այլ իրավասու մարմիններին և անվտանգության և հասարակական կարգի պահպանության մարմիններին միայն դրանք տրամադրած իրավասու մարմնի համաձայնությամբ:

3. Տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու անհնարինության կամ գաղտնի տեղեկատվությունը բացահայտելու դեպքում մյուս Կողմի իրավասու մարմինն այդ մասին անմիջապես կհայտնի տրամադրող Կողմի իրավասու մարմնին, կնշի տեղեկատվության բացահայտման պատճառը և հետևանքները, ինչպես նաև կտեղեկացնի այն միջոցների մասին, որոնք ձեռնարկվել են այդպիսի երևույթները կանխելու համար:

Հոդված 5

Անձնական տվյալների պաշտպանությունը

Փոխանցվող անձնական տվյալների պաշտպանության համար կիրառվում են հետևյալ սկզբունքները.

1) թույլատրվում է տվյալներն օգտագործել միայն դրանք տրամադրած իրավասու մարմնի կողմից սահմանված նպատակով և պայմաններով: Նպատակը և պայմանները չեն կարող հակասել սույն Համաձայնագրի դրույթներին.

2) տվյալները հաղորդված իրավասու մարմնի հարցումով հարցվող իրավասու մարմնին կտեղեկացնի նրան տվյալների օգտագործման եղանակի և գործի վերջնական արդյունքների մասին.

3) տվյալները տրամադրվում են միայն անվտանգության և հասարակական կարգի պահպանության մարմիններին. այդ տվյալները այլ մարմիններին փոխանցելու համար պահանջվում է փոխանցող մարմնի գրավոր թույլտվությունը.

4) տվյալներ տրամադրող իրավասու մարմնին ասպահովում է դրանց իսկությունը և ճշգրիտ լինելը. եթե պարզվի, որ այդ տվյալները կեղծված չեն, կամ դրանց տրամադրումն արգելված էր. պետք է անմիջապես այդ մասին հայտնել դրանք ստացած իրավասու մարմնին. այդ դեպքում այդ մարմինը պարտավոր է ուղղել կամ ոչնչացնել փոխանցման համար արգելված տվյալները.